Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի ,, Արագածի Մ.Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց՛՛ ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի /3 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:
ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1)

2.Փաստաթուղթը (դիպլոմ) ,,Հանրակրթության մասին՛՛ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն (Ձև 4)

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար՝ 3x4 չափի

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի սեպտեմբերի 30-ին ժամը 14:00-ին Արմավիրի մարզի Արագածի Մ.Մեխակյանի անվան միջնակարգ դպրոցում:
Տեղեկությունների համար զանգահարել 041888148/077271125/ հեռախոսահամարներով: